

ՔԱՏԱՆՈՐՈՒ ՍԳՐՈՒԹԻՒՆ
 Պոլիտիկոյ համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆՈՒԿ ՎՃՈՐՔԵԼԻ
 —X—
 Գրութիւնք եւ չեն տուիր
 —X—
 Իրանուցման տոյր 20 լու-
 բիւն է. Երեկոն աւելի աւե-
 րակներու համար 20 Օլո
 զեղչ կը ըստայ :

ՇԱՐՋՈՒՄ



R. P. Kalemkarib
 (Austrie)
 Mechitaristense W. 4
 Vienna

Յանակի եւ դրամ դրկեզ
 Խմբագրութեան հասցիքն

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 L'action du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ՊԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ՊԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

ԴԱՆՈՒԲԵՆ ԱՆԴԻՆ

—X—
 Ա.

Դիտուած է թէ քանի անգամ որ առիթ ունեցած ենք բան մը գրելու ուսման հայ գործերու վրայ, գրեթէ միշտ դիտողութիւն մը, ցաւ մը յայտնելու ախտը հարկին մէջ գտնուած ենք :

Այսօր, ո՛չ գպրոցներու անգոհ հայուցիչ կերպարանքին, ո՛չ ալ անկախացող գաղափարութիւն անդամութեան մասին է որ պիտի խօսինք. այլ Իանուրի ուսման կան եղբրքներուն և աւելի ներսերը տարողնամ հայաստանցի պանդուխտներուն վրայ: Պրայիլի թղթակցութիւնը զոր կը հրատարակենք ներկայ թուով, բաւականէն աւելի է որոշ գաղափար մը տալու համար բարոյական այն ստորին աստիճանին վրայ, ուր իջած են մեր հայաստանցի եղբայրներէն ոմանք :

Չարհուրելի է այն արագութեամբ որով հայ պանդուխտը կաղզուի իր ապրած միջավայրէն: Ամբրիկա գայողը երկու օրէն բեմբասաց կը լլայ, Պուլկարիա գտնուողը պղպեղ ուսելու աստիճան կը պուլկարանայ և Ռոսիանիա ապրողը՝ հոմանո հի կը պահէ . . .

Տեսնելու բան է հայաստանցի այն խեղճուկ աղբորանքը որո՛ք Պոլսոյ այլեւայլ խանութէն մտնուումն գոն դադուրեղ եկեղեցի կը վաղէին, ժամերով ծնրաչոգ աղօթելու, ինչպէ՛ս կը կերպարանափոխուին «ազատ» երկիրներու մէջ: Շատ ցանցառ է այնպիսիներու թիւը, որոնք մաքուր և իրենց նահապետական փրկարար ասանդուլութիւններով կը մնան: Մնացեալները կը տեսնեն որ մէյ մէկ Տօն Փուան, մէյ մէկ Ռօմէօ կը գտնան և փոխիւթներ կը փնտռեն: Այն պանդուխտը որ շերտուանդ ձեռքերով, աշխատաւորի օրհնած քսակէն տանոց մը հանելով մտ կը վառէր Տիրամօր խորունկն առջեւ և ժամերով կը խորատուգորէր իր հայրենի օճախին անուշ յի-

շատաներով, հիմա «կալան» մը գարձած է, յանձնառու այդ տիտղոսին հրախրած բոլոր զոհողութիւններուն, դրամի, կրօնքի և պատուի՝ զոհողութեան:

Եւ այս բոլորը այն պատճառով որ «ազատ» երկիրքի տակ կապրի: Ազատութեան այս անբարոյական ըմբռնումէն աւելի վայրագ բան տեսած էք:

Ազատութիւնը տրուած է ձեզ, անկաշկանդ կերպով դարդանալու համար, և դարմանելու մտաւորական այն ահուկի զնանները որոնց ենթարկուած է իր թրքական տմարգի վարչութեան ճշնչումով:

Ազատութիւն տրուած է ձեզ՝ ձեր պատասխիլ ապրելու, ձեր վատտակին բացարձակ տէրը մնալու, և ձեր մտաւորաւ անուշիւթական միջոցները դործածելու այն բաներուն որոնք օգտակար են ձեր ընտանիքին ու հայրենիքին: Այ՛, ըմբռնումը ունեցէք ազատութեան վրայ, ապա թէ ոչ դիտեցէք որ անբարոյացոյցիչ հրապոյրները, զեղխութիւնը, պատուաւոր հայտ պարտաւորութիւններու մոռացումը շատ աւելի մահացու և բնաջնջող են քան քիւրտին և թրքին ամենավատ հալածանքը որով խոյս տուած էք:

Չէ՛, սիրելի հա ստանցիներս, ստիկա ելլելու ճամբայ չէ. կորստեան ուղին բռնած ըլլալ կը թուիք: Ուր որ ալ գտնուիք, միշտ նոյնը մնացէք, ճշմարիտ հայեր, խիստ բարոյաւ անով, ու շերտուանդ սրտով. և միտքերն իր սեւեւած միշտ գէպի հայրենիք:

Ռուսմանահայուն համար ինչ որ ալ ըլլուի, գիտցէք որ ամենէն մաքուրը մնացած է այն վատաբարոյ խաւերուն մէջ որոնցմէ շրջապատուած է: Ռուսմանահայ տիկինը սոսքի ի հայրենի մնացած է միշտ. և այրերէն քիչերը միայն վեցխութեան ոլորտին մէջ կորուսուած են. մեծ մասամբ լուրջ և խելոր գլխի անձեր են. օգտակար այդ օրինակէն: Եւ յետոյ, մենք, այդ կողմերը գաղ-

թող հայաստանցիէն կը սպասենք ո՛չ թէ գայթակղելի տեսարաններու ծաւալումը, այլ աւելի, հայրենի բարքերու նորոգումը, հայութեան զգացումին մեղմիկ փոխանցումը, ներաբկումը այդ հեռաւոր սառած եզրայրներու երակներուն մէջ:

Ինք մը, որուն վստահութիւնը ըմբռնած ըլլալ չեն թուիր մեր պանդուխտները: Ինչ պիտի մտածէ տեղացի հայը, երբ տեսնէ թէ այն Հայաստանը զոր սիրելու և յարգելու կոչուած է, այսքան անխիղճ, թեթեամբ և երբեմն անբարոյական խորթ արարածներ կը ժայթքէ:

ԳԱՐԵՐ-ԱՐՇԱՒԻՐ

ՕՐԸ ՕՐԻՆ

ԹԷՊԼԻ ԵԱՂՈՒՊԵԱՆ

«Րեւելյութի մէջ Շուվայէն գրուած թղթակցութեան մը իմացանք թէ քանի մը օր առաջ տեղացի բաւական շքեղ հանդէսով մը ասոնամ են հանգուցեալ թշուար Եղուպեանի յիշատակը:

Իրաւ որ մեր մէջ շատ հազուադէպ է պատահիլ կիներու հանրային բարերարներու շարքին մէջ. և ճիշդ այդ պատճառով է որ ես աւելի խորին յարգանք մը կը պատճառեմ Շուվայի այդ կրթասէր բարերարու հի սիրտի յիշատակին առջեւ:

Օր. Թէպէր Եղուպեան 1810 թ. տեսնենք Շուվայի հարուստ ընտանիքէ մը ծնած ու թէեւ կրթական տեսակետով այդ բոլորովին աննշան քաղաքի մէջ մեծցած, ոսկայն գիտութեան ճշմարիտ սիրահար մը եղած է:

Ինք և իր քոյրը տեղական վարժարանին մէջ Սաղմոսի և Նարեկի հասարակ ընթերցումը աւարտէին վերջ, դիմած էին ինքնօգնութեան և հակառակ հայրական յանդիմանութիւններու, ծնողական բոլոր ստիպումներու, որոյցմ էին նուիրուիլ ուսման միայն և մնային մինչեւ վերջը կոյս:

Շուվայ այցելող զանազան վարդապետներէ և տեղացի քիչ շատ

ուեալ քահանայներէ քերականութիւն ու գրաբառ սորված և իրենց կնոջական յամառ աշխատասիրութիւնով շարունակած էին միշտ սորվիլ:

Կը յիշեմ թէ ինչ քաղցր զգացումներով կը համախուէին մեր մանկական սրտերը ի տես ուսումնասիրութեան այդ վեհալութեան տիպարներու, երբ կուգային այցելիլ երբեմն մեր վարժարանը:

Եւ հրապուրուած անոնց կուսական քաղաքուն յորդորներէն՝ ընկերով մը հետ յաճախ կերթայինք իրենց շնորհալի բնակարանը՝ առջեւին ծուկ չուքած հիացմամբ լսելու համար անոնց մայրական գործալիք խրատները: Եւ որքան ազդու կերպիւ տպաւորուած են անոնք դեռ մինչեւ այսօր սրտիս ու մտքիս մէջ:

Այո՛, դեռ երեկուան պէս կը պատկերանան յիշողութեան առջեւ այն սրբակեաց քոյրերը՝ առանձնացած պարզ ու մաքուր սենեկի մը մէջ՝ շարունակ թուրթի կոյտերու վրայ հակած և թաղուած իրենց ամենասիրելի գրքերու գէպերուն մէջ:

1860 թ. տեսնենք Շուվայի հոգաբարձութեան պիտոնէն տակնու վրայ եղած և իրենք ստիպուած էին փակել իգական վարժարանը:

Սակայն Եղուպեան քոյրերը և ուրիշ նոյնքան բարեւէր տիկիններ չհանգուրժեցին և խնամակալութիւն մը կազմելով բացին վարժարանը՝ իրենք հոգալով նորա բոլոր պէտքերը:

Եւ տակաւին մինչեւ այսօր միեւնոյն խնամակալութիւնն է (թէեւ անգամուհիները փոխուած) որ կը հոգայ այդ վարժարանը:

Սակայն Օր. Թէպէր Եղուպեան փափագելով մահուանէն յետոյ եւս ծառայել ազգին, Յուարի առաջ մեռնելու ատեն կտակեց բաւական ընդարձակ ծառայարգ պարտեզով և ազբւրով տուն մը, որ այժմ կը ծառայէ իբր աղջկանց վարժարան:

Կտակեց նաեւ տարեկան 600

Ֆրանքի մօտ գումար մը, զոր Շումայի եկեղեցին ու իգական վարժարանը կտանան այժմ հանգուցեալի ժառանգորդներէն :

Շումայի պէս սակաւահայ քաղաք մը գաստիւրակութեան մասին բոլորովին աննպաստ պայմաններու մէջ մեծցած 80ամեայ կնոջ մը քով ուսման պիտի սէր և հանրութեան օգտաւ ըլլալու այնքան շեքմ եռանդ հակելի և գովելի է անշուշտ :

Եւ Շումայցիք իրաւունք ունին այժմ ամէն տարի մասնաւոր հանդէսով տօնել իրեն յիշատակը :

«Յիշատակ արգարաց օրհնութեամբ եղիցի» :

ՏԻՖԼՍԸ ԱՃԷՄԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 30 Հոկտ.

Գերմանիոյ կայսեր Պոլիս գտնուած միջոցին, թուրքոյ մայրաքաղաքը հարուստեան տան մը երեւոյթը ստացած էր : Այս պատուս պարագան բուրձովն տարներ է ընդհանուր սոյոյ և պէտք արձանայտնութիւններն են որ սեղի կը շնորհեն : Վիճակ մը որ կրկնէր օտար սերունդներու հանձման հետեւանքն է : Թէեւ ըստ սովորուած Պոլիս մէջ ըստ մը իսկ չը գրուի կրկնէր ինչորին վրայ, իրրեւ թէ միջոցին թողաքականութիւնը այսքան հրատապ խնդրով մը չը զբաղէր, և իրրեւ թէ յազուած գործը մեր ներքին քաղաքականութեան հետ սերտ առնչութիւն ունեցած ըլլար :

Բայց, այսու շանդերձ Պոլիս մէջ, օտար թերթերու միջոցաւ ամէն բան լուսաւոր է և թուրքերն ալ բերնէ բերան կը խօսին, թէեւ ոստիկանական իրաւական հակոյճութիւն կայ :

Երբ ներքին քաղաքականութեան վերաբերեալ կարեւոր խնդիր մը կը յուզուի հրատարակել վրայ, արտաքին նշանները իսկոյն կերեւին այստեղ : Քաղաքի փողոցներու մէջ հեծ-

նալ և հեծնակ ոստիկաններու թիւը կը կրկնապատուի և լրագրաց մէջ գրուի կը սկսի թէ «արտաքին գործոց նախարարը երկէ մինչեւ երեկոյ պալատ մաց. նախարարը արտաքին կարգի նիւտ բրին պալատան մէջ». արտաքին գործոց նախարարը երեկ զեպաններուն այցելեց» :

Այս նշանները ամբողջովին երեւելի սկսան, ու վերահաս սպանալը կը մատնեն :

Կրկնէր յանձնուած վերջացած գործողութիւն մըն է այսօր. թուրքերն ալ հեղհեղ կը գաղթեն Անլանիկ և ուրիշ տեղեր, թէպէտ այդքան չտապիրու բան չը կայ, որովհետեւ հեղհեղեալ բարեկարգութիւնը սկսած է տիրել կղզիին մէջ, եւ այս պարագան շահաւոր պիտի ըլլայ նոյն իսկ իսլամաց համար :

Կրկնէր նոր վիճակը հայոց համար ալ առեւտրական և երկրագործական գործունէութեան նոր ասպարէզ մը պիտի ըլլայ, այս կէտը չեմ կարծեր որ խուսափի ձեռներէց ազգայիններու ուշադրութեանէն :

Գերմանիոյ կայսեր վայելած արտաքին կարգի ընդունելութիւնը քաղիացեաց շիջերը գրգռեց : Բաց աստի՛ Մարաշի մէջ Սալվաթօր անուն եկեղեցականը սպաննող գնդակաւ Մազհար պէյ որ մահուան դատապարտուած էր, այս անգամ Սուլթանին ներման արժանանալով Պոլիս բերուած է. նմանապէս գերման կաթիլիկներու պաշտպանութիւնը Գերմանիոյ կայսեր յանձնուելու ետքուստ ինչ մէջ գիտնի մը նուերու մը, գաղիական զիւրազգածութիւնը վերադարձուց : Այս ամենուն հետեւանքը եղաւ թուրքոյ և փրանսի յարաբերութեանց ձգտում մը : Գիտական Պ. Գանպոն երկէ մեկնեցաւ առանց իր պաշտօնին վերջացած ըլլալը ծանուցանող զիրը Սուլթանին մատուցանելու :

Անցեալ օր Բարիկ օսմ. գիտական Մուսթաֆա պէյ փրանսի արտաքին գործոց նախարար Պ. Տէլբասէի երթալով հարցուցած է.

— Ի՞նչ պիտի ըլլայ Պ. Գանպոնի յաջորդը Պոլիս մէջ :

— Գիտական պէյը չկայ առ այժմ.

գործակատարն ալ բաւական է ընթացիկ գործերը վարելու :

Միւս կողմէ պէյը չէր հետանալ յետոյ, Պ. Տէլբասէ կրկին կը կանչէ զինքը, և կըսէ.

— Եթէ ձեր սէրու թիւնն ալ այդպէս ընէ, գէշ չըլլար :

Այս խօսակցութիւնը տեղեկագրուած ըլլալով Պոլիս, արտաքին գործոց նախարար Պ. Գանպոնի այցելեց եղիւթ թիւնը իմանալու համար, Պ. Գանպոն իրողութիւնը հաստատած է նոյնութեամբ :

Ռուսիոյ զեպանն ալ Լիվաթիա երթալէ առաջ, իսլամ ծանուցագրի ստուած է Գրան, Սերպիոյ խնդրոյն, իր քահայ գաղթականներու վերադարձին համար, Մէկ խօսքով, Գերմանիոյ կայսեր եղած ընդունելութիւնը միւսներու ջիղերը գրգռած է :

Մանաւանդ Անգլիոյ՝ Կրկնէր խնդրոյն մէջ ցուցուցած կորովը սարսափահար ըրած է այստեղ ամենքը :

Թողունք այս բոլորը և անցնինք մեր ազգային քաղաքականութեան :

Օտար լրագիրք կը գրեն, և այստեղ պաշտօնական և սուպրապոն շրջանակներու մէջ կը խօսուի թէ կրկնէր խնդրէն յետոյ հայկական խնդրին է որ պիտի յուզուի : Այս լուրը պալատի մէջ շատ անհաճոյ սպասուողութիւն ըրաւ. և անցեալ օր Յարութիւն փաշա զիշերանց պալատ կոչուելով հարցուած է թէ ինչո՞ւ ազգը զիմում չընէր օսմանեան կայսրութեան և օտար գոնքը կը բաղիտ :

Յարութիւն փաշա պատասխանած է թէ ազգը ո՛չ մէկ ասին զիմում չէր օտարաց : Նոյն հարցումը նաեւ Պատրիարքարանի և նոյն պատասխանը անկէ, թէ ինչ պիտի ըլլայ խնդրոյն ելքը չինք պիտի առայժմ, բայց վերջապէս հայկական խնդիրը կը յուզուի դարձեալ. այս է ճշմարթութիւնը : Ինչու թէ մինչեւ խնդրոյն վախճանը Անգլիա և մլւս աէրութիւնք իրենց կորովէն քան մը չկորսնցնէին, ապա թէ ոչ, կոտորածներ անխուսափելի են :

Վանէն և Պայագիաէն կը գրեն թէ ազգական իշխանութիւնք տնու

ղողի մէջ են և կը հսկեն հայոց վրայ, թէեւ միւս կողմանէ ալ կը ջանան միջադէպի մը տեղի չտալ, որովհետեւ Գանիա վերջին կոտորածը ուղղակի միջամտութիւն մը եւ ո՛չ հաճելի հետեւանք մը յառաջ բերաւ :

Արտաքին վիճակը այսպէս. ներքին վիճակը նոյն անգոհացուցիչ հանգամանքին մէջն է : Կատարութիւնը հայնդեւորները՝ մանաւանդ գաւառացիները կը նեղէ. բան չունիս նէ սաակ տուր այս կամ այն անձին, որպէս զի մէկ ազգականը բանալէն ազատի. երկու օր աչքէ հետո կը մնայ, երրորդ օրը նորէն կուգան ու կը տանին :

Այս շարժում նորէն իսկ մը խնդրագաւառացիներ հուսաբեցին և պարտաւորեցին որ հեռանան Պոլիսէն :

ՆԵՏ

Պոլիս, 28 Հոկտ.

Ուրիշ անգամուան վերապահելով աւելի լայն կերպով խօսիլ տեղական գործերու և տեղույս պանդուխտ ազգայիններու բարոյական անմխթալ կացութեան վրայ, անցնինք զէպէր մը որ իր կէտ-գաւառ կէտերը հանգամանքովը, շատերու ինչքը զլիւր բերելու օգտակարութիւնը պիտի ունենայ :

Էվբեկցի հայ մը, Յակոբ, երկար սարկներէ ի վեր իր կինը ու զաւակները երկիրը երեսի վրայ թողած, այստեղ կապրէր օտմանացի հոմանուէրի մը հետ : Բնաւ օգնութիւն մը չէր ընէր զծրախտ իրեն ներսը. և նոյն իսկ տեղույս հոգաբարձութեան և քահանային յաճախակի միջամտութիւնը ճամբու չէին կրցած թերեւ ալ այլատեքած ճիւղը հայրը : Բայց հիմա իր արդար պատիժը գաւա :

Վերջին օրերս, հոմանուէրին, որուն վրայ այնքան կոյր վստահութիւն կը առնէր, յանկարծ, էվբեկցիին բացակայութեան օգտուելով, անոր բոլոր զբաղը, գոյքերը և գործընկերը յափշտակելով ուրի տեղ մը կը փոխադրէ :

Գործը պատարան հասնելով, էվբեկցիին հետեւեալ ջախջախիչ պա-

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (47)

Երկրորդ օրը չկարողացայ այն սրահով անցնել. կինը և զաւակը եկել էին, և, ազատ ամուսնու ու հօր փոխարէն նրա գիւղը գտնելով՝ սկսան սրտաշարժ ուղբուկոծեր բարձրացնել :

Այնուհետեւ մի տարօրինակ թախիծ յարեցապետեց ինձ ամբողջովին. էլ ոչնչով չէի հետաքրքրուում : Այդպէս օրերն անցան և վերջապէս եկաւ Չատիկ շաբաթ օրը : Ապրիլի 19ը, 91 թուականի : Այժմ լուր չունէի և մտքովս անդամ չէր անցնում որ այդ գիշերը տաճկական բանտից դուրս պիտի անցկացնեմ : Մի ֆրանսիերէն բոմպի կար քոյս և այդ էի կարդում. արգէն երեկոյցեան ժամը չորսն էր : Յանկարծ քի սաստիկան ներս մտաւ, և յայտնեց. «Նազիմ փաշա սիւղի իստէյօր. թէրճէման պէյ տա, մուսիւ Մաքսիմով օրոտ տըր» :

Իմ սիրելի պահապան ժամտարմիս աչքերը ուրախութեամբ փայլեցին. «Ի՞նչ ալ չըրգաճագըն, մուսիւ Պատրիկով, բու կիւն սիրելին բէուկ կիւնի տիր» :

Առանց մեծ յայտերի հետեւեցի ոստիկանին, և մենք շուտով հասանք Չատիկէ Բարուն. վերջապէս մտանք Նազիմի ընդունարանը : Այնտեղ էր Մաքսիմովը : Մի երկու վայրկեան նստելուց յետոյ, Նազիմ հաղորդեց.

— Մուսի Պատրիկով, Մուլթանը ձեզ ներեց :

Ես ոչինչ չկարողացայ պատասխանել. հաւատալս չէր գալիս սաստիկ յուզիցի. Մաքսիմովը ռուսերէն ասեց. գոնէ շնորհակալութիւն յայտնեցէք :

— Ինչո՞ւ յայտնեմ, պատասխանեցի, քանի որ համոզուած եմ թէ այդ ներումը ստիպուած ներում է. մանաւանդ որ ես չեմ խնդրել. ես իմ շնորհակալութիւն կարող եմ յայտնել իմ կառավարութեան որը ինձ պաշտ-

պանեց, և որի շնորհիւ թուրքերը չկարողացան իմ գլխին այն օյինները խալալ, ինչ որ խաղում են իմ տաճկահայատակ եղբայրների :

Մի քանի րոպէ յետոյ, Մաքսիմովը նազիմի ասեց. — Է՛հ, մենք գնում ենք : Նազիմը տեղից վեր կացաւ, մեզ ուղեկցեց մինչեւ դուռը, յաջողութիւն մաղթեց, և ձեռքս սեղմելով ասեց բարի ճանապարհ. իմ բերնիցս դուրս թաւ «օ ուրվօտա» :

Մաքսիմովը մպտելով ասեց. «Օ՛հ, միթէ նորի՞ց միտք ունիք Նազիմ փաշային հանդիպելու Պոլիս մէջ : Ծիծաղեց և նազիմը : — Ինչու չէ, ասացի ես, կարող եմ իբր դուրստ կամ իբր վաճառական դալ, հիմա միջոց չկար Պոլիս գեղեցկութիւնները լաւ տեսնելու :

Նազիմը առաջարկեց Մաքսիմովին մի ոստիկան վերցնել, եթէ պէտք կայ : Ոչ, բնաւ պէտք չկայ, պատասխանեց Մաքսիմովը լուրջ կերպով :

Ընդունարանից դուրս գալով միջանցքում հանդիպեցինք բէխիւն Հիւսնի էֆէնաիին, տաճկական այդ գաղանին, որը այնքան հայ է անջել, և մեծ վախազ ունէր ինձ էլ տանջելու, սակայն անկարելի էր. բաւականանում էր ակուսները կճռտացնելով. հէնց որ տեսաւ, կեղծ ժպիտով ասեց. մուսիւ Պատրիկով, կիտիօրսուտուղ, էյ. — Էֆէգ, էֆէնտի, գիտիյօրում :

Մենք դուրս եկանք, կառք նստեցանք, և գնացինք հիւստոսարան : Թուրք կառավարութիւնը պատուիրել էր հէնց առաջին նաւով ինձ ճամբու գնել Օդէսա :

Նաւը երկուշաբթի առաւօտին էր ճամբայ ընկնելու : Չատիկ կիրակին անցկացրի Պոլսում, սակայն ինձ արգելված էր հիւստոսարանի բակից դուրս գալ թախիտումս կատարեցի հիւստոսարանի սենեակներից մէկում :

(Շարունակելի)

աստիճանը կրնա զուգահեռ համարուելն . . .
 «Յակոբ, տրակը, ես չեմ գիտեր որ դուն կին եւ զաւակներ ունիս եւ զեր . . . հիմակ համոզուած եմ որ դուն անխիղճ մարդ մըն ես . . . Դուն ինձի կրակէր, քեզ կը սիրեմ, բայց իր զաւակները լքող մը, մինչեւ վերջը իմ վրաս կը դուրսդուրայ . . . Ուրեմն, տրակը (սիրելիս), քու ինչքդ գրաւեցի, իմ ասանու մէկ ծաղիկ սարիներու փոխարէնը ձեռք բերած ըլլալու համար . . . ասոր հազար ֆրանք եւ ինչքերդ քեզ վերադարձնեմ . . . ապա թէ ոչ՝ քեզ նուիրած կեանքս ասկէց աւելի կ'արժէ . . . »
 Ամթաճար է վէրջիցին ձեռնուցանին եւ դարձու գտարանէն . . .
 Յուսանք որ այդ դէպքը պերճախօս գրաս մը կը ըլլայ ուրիշ ազգայիններու . . .

Շուրջ, 26 Հոկ.

Տեղուտ հայ տիկիները կարծես մասնաւոր առնջ մը ունին հանրային գործեր վարելու եւ ազգային յառաջդիմութեան օգտակար ըլլալու . . . Անշուշտ ուրախաբեր է այս բանը եւ փափագի որ ուրիշ աւելի կարեւոր քայլերու հայտնաբերուին աւելորդ ին միեւնոյն զգացումներով . . .
 Ընթերցողն արդէն գիտէ թէ մեր իգական վարժարանը եւ 20 տարիէ ի վեր անոր տուած պըտուակները մեր տիկիներու հանրային գործունէութեան արդիւնք են . . .

Ինչու տարակից շուրջիք թէ այստեղ իգական սեռի դաստիարակութեան կենսական գործը, առանց տիկիանց խնամակալութեան, քայտի ունենար նոյն կանոնադրութեամբ, ինչ որ ունեցաւ անոր շուրջիք . . .

Մինչդեռ աւելի կարող քաղաքներու մէջ մասնաւոր ազգային վարժարանները մանրավաճառի կրպակներու պէս շարունակ բացուելու գոյուելու են թակայ եղած էին, մերը երբէք չհասաւ այդ վիճակին . . . Եւ այժմ կրնանք ըսել թէ շուրջիք կը թակայ տեսակէտով շատ բան կը պարտին իրենց խնամակալութեան . . .

Փոքրիկ բայց բաւական պերճախօս ապացոյց մը մեր ըսածին . . . յայտնի է որ տեղացիք թրքախօս են եւ մենք ասկէ 15—20 տարի առաջ հայերէն գիտցող աղջիկը մատով կը ցուցունէինք . . . Իսկ հիմա հաղտադէպ է պատահիլ երկուստարդ աղջկան մը կամ մանկամարդ կնոջ մը որ վարժ հայերէն մը չլսուի . . .

Թող աւելորդ չդատուի եթէ թուենք այստեղ նաեւ խնամակալութեան մէկ ուրիշ տնտեսական օգուտը . . . Առաջին օրէն իրեն սկզբունք դրած էր որ տոնախրմութիւններու սուխիւ իր վարժարանին նպատաներ հասարակութեան պաշտօնապէս այցելէ այն ընտանիքներուն միայն, որոնք իրենց հերերը մեծարելու համար զանազան անուշեղէններու

եւ ըմպելիներու փոխարէն կը բաւականանան միայն մէկ տեսակով, միաներուն արժէքը նուիրելու համար խնամակալութեան զանձանակին . . . Եւ հիմայ նուազայի մէջ չէր կրնար դանել հայ ընտանիք մը, որ իր անդամներու տոնախրմութեան առթիւ կամայ թէ ախմայ շուրջիք եւ անօգուտ ծախսեր ընելու հարկին մէջը գտնուի . . . Փակադձի մէջը սենք թէ շատ փափագելի էր որ մեր այրերն ալ հետեւէին կիներու եւ ընկերու թիւններ կազմէին ոգելից ըմպելիներ չդորձածելու համար . . . Դոնէ մէկ բաժակէ աւելի . . .

Յետոյ թող ներուի մեզ ցոյց ալ նաեւ այս խնամակալութեան մէկ ուրիշ յատկանշական կողմը . . . Մենք գիտենք թէ մեր մէջ ո՛րեւէ բարեգործական կամ ազգասիրական նպատակով հիմնուած ընկերութիւն որչա՛յ կրնայ տեսական ըլլալ . . . ամենէն աւելի ջերմ եւ անդով սկսուած ընկերութիւնները հաղիւ առուպիլ չափ փայլած են . . . մինչդեռ մեր տիկիանց խնամակալութիւնը 20 տարի շարունակ բաւած է ու դեռ կը բալէ անյողող սրբ իր փշոտ ճամբէն . . .

Ասկեղծ բարենիշ մը չվայլե՞ր իրեն . . .

Ք Ր Ո Ն Ն Ի Կ

Յայտնի է թէ բաւական ատենէ ի վեր, Տատան Յարութիւն փաշան, իր քեռորդոյն Տրդատ պէյի միջոցաւ բանակցութեան մտած էր Հայ Յեզ. Իշանակցութեան հետ, հայկական ինքրին կարգադրման մասին իրաւաստահոլութեան մը յանգելու համար . . . Այժմ կ'մանանք թէ Իշանակցութիւնը, իր ձեռնհաս մարմինին միջոցաւ, անցեալ ամսոյ 21ին, Տրդատ պէյին յանձնեց է իր պատասխանը . . .

Եւ Պոլսէն մեզ կը գրեն թէ երբեմն ուսուցիչ եւ գրագէտ ու եւրեքն ալ «Հանրագիտակ» հանդէսին խմբագիր, եւ վերջապէս տարիներէ ի վեր յայտնի լրատու, ազգին հացովը մեծցած օձ, Արմէն Լուսինեան, ամէն ապինէ աւելի կատարութեամբ կը յարատեւէ իր գաւաճանի դերը . . . Վերջերս «գրական» մատնութիւնով մը հոշակ հաներ է . . . Գացեր ուստիկանութեան իմացուցեր է թէ «որբանոց» բառը սղգին մէջ գրգռութիւն առաջ կը բերէ, եւ յորդորեր է որ այդ բառը վերցընելու եւ տեղը «գիշերօթիկ վարժարան» դնելու հրաման տրուի . . . Իրու ալ այդ հրամանը արուեր, եւ ժամանակ մը «մանկանոց» գործածուելէ յետոյ, իրողութիւնը բացատրուելով մեծ գծուարութեամբ կարելի եղեր է բառը դարձեալ «որբանոց» ի փոխել . . .

Իւթիւճեան եւ Սշոտ վարդապետները առանց օրինական վկայագիր ունենալու է որ էջմիածին գաղտնէին . . . Հայրապետը ապշած՝ առջի բերան հարցուցեր է թէ որո՞ւ կողմէ եւ որի՞ խնդրանք եպիսկոպոսանալու կուզան . . . Բայց յետոյ, Հայրիկ որ խնդիրները անուշ տեղը կապելու քաղաքականութեան հետեւած է միշտ, չգիմանալով իրեն կզած թախանձանգին, ինքնակոչ քանտիտաներու ճամբորդութիւնը պարապը չհանելու համար, իրմէն խնդրուած ձեռնագրութիւնը կատարեր է . . .

Կովասահայ յայտնի վիպասան Պ. Պերճ Պառչեանց, որ միանդամայն կը գործէր դպրոցական սուպարէզին վրայ քառասուն երեք տարիէ ի վեր, այս սեպտեմբերէն սկսեալ իսպառ թողած է ուսուցչական պաշտօնը . . . Կաթողիկոսին յանձնարարութեան վրայ, Ներսիսեան վարժարանի հոգաբարձութիւնը 600 ռուպլի կենսաթոշակ յատկացուցեր է Պ. Պառչեանցի . . .

Գուրապէլէնի կրօնափոխական շարժումները դադարած են . . . Պորթիոյ դատական նախարարութիւնը ընդուներ է հայհոսութեան կանոններու պատրիարքին գիմումը, որով սա կը խնդրէր որ վանայ եւ չըջակայից հայհոսութեանները իրենց ուրոյն առաջն. տեղապահը եւ աւանձին մոխթարը ունենան . . .

Կրէտէի հայ մատրան հոգեւոր հովիւ, Տ. Մանուէլ քահանայ, որ վերջին խոսովութեանց միջոցին Պրեզն փախած էր, իր արգահատելի կացութիւնը պատմելով օգնութիւն խնդրեր է Պատրիարքարանէն . . . Կը յուսանք որ Տէր հօր տառապանքին վախճանը հասած ըլլայ, որովհետեւ այլ եւ այլ տեղերէ կրէտէ գաղթող ազգայինները շնորհքով ծուխեր պիտի դառնան իրեն համար . . . Վառնաէ եւս մէկէ աւելի պաղթական հայեր կրէտէ երթալու կը պատրաստուին . . .

Վիէնայի հայերը, Արսէն վարդապետի նախագահութեամբ քառասուն օր քառասուն դիշեր ժողով դումարելէ ետքը, միաձայն հաւանութեամբ որոշեցին ծրագրեալ հայ մատուր . . . չի կառուցանել . . .

Վերջերս Ամբրիկայէ դարձող հայեր Մամոնի մէջ խմբովին ձեռքակալուած էին թուրք իշխանութեանց կողմէն, Այժմ կ'իմանանք թէ անոնցմէ 19 հոգի ազատ արձակուեր եւ սկսեր են իրենց ուղեւորութիւնը շարունակելով դէպի հայրենիք . . .

Վնցեալ Շաբաթ իրիկուն Վառնաի հայ երիտասարդները «Մայլ Վահան» ներկայացուցին բաւական յաջողակ կերպով . . . Հասովը յատկացուած է Ընթերցասիրաց անուանով նոր ընկերութեան մը, որ Սիսականի շա-

րունակութիւնը պիտի ըլլայ . . . Ձեռք ըմբռնելով թէ այդ «Սիսական» ինչո՞վ մեղաւոր է որ մէջ տեղէն դուրս կը հանուի . . .

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Խ. Փ. եւ Տ. Մ. Տօքշան . . . Ձեր հրէական տարկութիւնը սեղանագրուեցաւ մեզ . . . փութացէք ձեր բաժնեգրները մեզ հասցնելու միանգամ ընդ միշտ համոզուեցէք թէ ո՛չ ձեզ եւ ոչ այ ձեզ պետերուն թերթ գրկելու հարկին մէջ չենք գտնուիր . . .
 —Ս. Բարիգ. — Այդ նիւթին վրայ գրած ենք արդէն . . . կը սպասենք . . .
 —Ով որ գիտէ Սեղազի Տ. Գրիգորեանի (Ներսիսեան) Ղարաքիլիսէ գիւղէն) ուր գտնուիր, թող փութայ խմբագրութեանս հաղորդել . . .

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Դ Ե Պ Ք Ե Ր

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

«Նօլա Օթջիկ» լրագրին մէջ կը կարդանք . . .
 Բարեղի լրագիրները կը պնդեն թէ կոմս Մուրադիէվի եւ ֆրանսայի արտաքին գործերու նախարար Պ. Տէլքասէի միջեւ բանակցութիւն մը կատարած է սա հարցին վրայ թէ հայկական խնդիրը պէտք է վերանորոգել եւ թէ հարկ է նոր ծանուցագիր մը տալ Սուլթանին՝ խոտաչոյած բարենորոգումները կատարելու համար . . .

Այս առթիւ ռուսական թերթերը կը յայտարարեն որ՝ թէ եւ այդպիսի բան մը տեղի պիտի ունենայ, բայց ոչ այնքան շուտ . . . Ռուսեֆրանսական նիղակակցութիւնը, այս խնդրին մէջ Անդրիոյ դաշնակցութեան պէտք ունի, կարողանալու համար Սուլթանին քիթը իջեցնել, եւ հասկըցնել անոր թէ Դերմանիոյ եւ Աւստրիոյ կառավարութիւնները չեն որ պիտի կրնան կանգուն պահել Վասիլի փաթթոցաւորներու իշխանութիւնը . . .

Մեր կառավարութիւնը ինչ կընէ . . . կը քննանայ արդեօք Ահա կրէտէն իր ինքնօրինութիւնը ունեցու . . . Հայաստանն ալ պիտի ընդունի իրենը . . . Իսկ Մակեթոնիան ե՞րբ . . .

Ի Ա Ո Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Յունաստանի նախկին նախարարներէն Պ. Սքուրիսի Ձէթիւնէ, Պէլկրաս եւ Սօֆիա ըրած այցելութեանց առթիւ, Բէթէրպուրկէ «Քօրէսթոնտան Բօլիթիք» լրագրին կը հաղորդեն թէ՛ ռուս գիտնադիտութիւնը բնաւ միտքէն չանցներ պալքանեան պետութեանց մէջ ու է փոփոխութիւն մտցնել . . .

Ռուսիոյ լուրջ բաղձանքն է զղուշանալ ու է չփոթութիւն առաջ բերելէ պալքանեան արդի դրութեան մէջ . . . Եւ իր այս բաղձանքին ապացոյցն է ռուսական արտաքին ամբողջ քաղաքականութիւնը, եւ մասնաւորապէս այն

համաձայնութիւնը որ կնքուած է Վիէննայի և Բէթերսպուրկի դաճիճններուն միջև, պարբանեան խնդիրներու վերաբերմամբ:

—Մարշանի արշաւախումբը Ֆրանսա պիտի դառնայ ձիպութիւն ճամբով:

—Վաշինկթոնէ կը հեռագրեն թէ նախարարաց խորհուրդը քանի մը օրուան պայմանաժամ տրուեր է Բարիդի հաշտութեան յանձնաժողովին սպանիացի պառուիրակներուն, Փիլիպպեաններու մասին ամերիկացոց պահանջքին պատասխանելու համար:

—Անցեալ շաբաթ առաւօտ Գերմանիոյ կայսրը և կայսրուիին Պէրուժէն Հոէնցովէրն մարտանաւը հեծան: Թուրքիաէ հեռանալուն առթիւ Վիլհէլմ բարեկամական հեռագրեր փոխանակած է Սուլթանի հետ:

—Պուլկարական Սոպրանիէին նիստերը կը շարունակուին: Ընդգրկմագիրները խիստ կեղծով կը քննադատեն օրուան կառավարութիւնը, անոր ներքին ու արտաքին քաղաքականութիւնը և ելեւմտական դրոճերը վարելու եղանակը: Պ. Կապրովսկի (ընդգրկմագիր) ըստ թէ քանի որ Նիւմա Կրէտէի խնդիրը լուծուած է, կառավարութիւնը պարտաւոր է Մակեթոնական խնդիրը բերել գիւտնագրական կանաչ սեղանին շուրջը: Այսուհանդերձ, Պ. Կապրովսկի այն կարծիքէն է թէ Պ. Սթոյլիովի նախարարութիւնը չունի այն կորովն ու ազգասիրութիւնը, որով կարենայ յանձն առնել այդպիսի նախաձեռնութիւն մը, որ թէեւ յանդուգն բայց այնքան համաձայն է ազգին աւագ շահերուն:

—Պ. Պոլսէ «Կաղէթ սը Ֆրանչիֆորդ» թերթին կը հաղորդեն թէ Վիլհէլմ կայսրը երեք երկար խորհրդածութիւններ ունեցած է Սուլթանին հետ: Միայն առաջին արարողագրերը ներկայ եղած է:

Տեսակցութեանց աւարկայնեղած է բարենորոգումներու հաստատումը, և բանախին ու նաւատորմին վերակազմութեան խընդիրները: Սուլթանը Վիլհէլմի բարեկամական խրատներուն հլու ազանջ գնելով, ինքզինքը բոլորովին համապատասխան է բարենորոգումներու անհրաժեշտ պէտքին համար:

—Սերպիական սահմաններուն մօտ թուրք կառավարութեան կառուցած ամրութիւններուն աշխարհութիւնները աւարտած են:

—Իուրը զեպպաններուն գանգատեր է ծովակալներուն գէտ, որոնք վերջին թուրք անդէն զինուորները բռնի կերպով նաւատեցուցեր և Բանախայէն վերուցեր են օսմանն: գրօշը:

—Պուլկարական նորակառոյց «Նուաէժտա» մարտանաւը, Պոռտոնէն մեկնած է, և մօտերս Տար-

տանէլէն անցնելով Վառնա պիտի հասնի:

—Փիլիպպէի մէջ սկսած է հրատարակուել «Էլտրա» անուն թերթ մը պուլկարերէն և սպաներէն լեզուներով, Պուլկարիոյ հրէից շահերը պաշտպանելու նպատակով:

—Ֆրանսայի դաղթային նախարարը մերժեց արտօնութիւն տալ Թիւրքիոյ Տրէֆիտի, Վճռաբեկ ատենի որոշումը քարտրականին հեռագրելու:

ԿՐԼՏԱՎԱՆ ԽՆԴԻՐ

Այժմ կղզւոյն մէջ, թուրք լալով, միայն 4 սպայ և 41 զինուոր մնացած են, Բէթիֆոն ուսական շրջանակին մէջ: Աստուց ալ գործը գոյքեր և ուղի-մամթերք փոխադրելու մէջ կը կայանայ:

Բանտիաէն դատ, ուր միայն անգլիական դրօշը կը ծփայ, որիչ կողմեր օսմ. դրօշակն ալ տակաւն պարզուած է միւս տէրութեանց գրօշին տուրթեր: Իսմայիլ պէյ Պուլիս կոչուած է:

«Սթանուարտ» Բանէի թղթակիցը կը յայտնէ թէ հիմա քրիստոնէականներուն ղէնքերը ժողովուրդ խնդիրը կը մնայ: Եւ սակայն քրիստոնէականները անգլիական հիւպատոսին յայտարարեն թէ պատրաստ են իրենց ղէնքերը յանձնել, կղզիին գործադիր յանձնաժողովէն հրաման տրուելուն պէս:

Եօրկիոս իշխանը կրէտէ պիտի երթայ, առ այժմ իբր բարձրագոյն բօմիտէր: Այս տխուր պիտի կրէ մինչեւ որ Սուլթանը զինքը պաշտօնապէս ճանչնայ կղզիին իշխան-կառավարիչ: Եթէ անկէց մինչեւ քանի մը շաբաթ Սուլթանը մերժէ այս փառազօր տարու, Եօրկիոս իշխանը չպիտի սպասէ Սուլթանական հաստատութեան:

ՊԵՂԻՆ ԱՐԿ ԵՐԻՆ ԱՌԹԻՒ

Ծանուցած էինք արդէն գերմանացի դիւանական սօքթ. Պէլրի մասին, որ Վանայ մօտ Սիփան Տաղի կողմերը կողպտուած և վիրաւորուած էր համիտիէ ըսուած աւազակ զինուորներու ձեռքով: Եւ սրովհետեւ Վանայ մէջ գերմանական հիւպատոս չկայ, անգլիականը լրջօրէն գործին միջամտած՝ և համիտիէներուն պետին, Հիւսէինի պաշտօնակալութիւնը խնդրած էր:

Այս գէպքը այնքան սովորական մէջ հայերուս համար, մեծ իրարանցում առաջ բերած է Եւրոպայի, և մասնաւորապէս Գերմանիոյ մէջ: Ռուս կան կարեւոր թերթ մը երկար խորհրդածութիւններ կընէ այս խնդրի առթիւ, և կը յարէ թէ՛ սօքթ. Պէլրի պարագան իր ուրախատիժ կողմերն ալ պիտի ունենայ անշուշտ, քանի որ պիտի նպաստէ

վերջ մը գնելու այն անտարբերութեան՝ որով գերման կառավարութիւնը և հասարակութիւնը կը վերաբերուի Թուրքիոյ քրիստոնէայ նահանգներուն մէջ մահմէտական աւազակ տարրի շարութիւններուն կատմումը: Վիլհէլմ կայսրը որ այնքան սնապարծութեամբ ինքզինքը ամենաքրիստոնէական վեհապետ մը կը ներկայացնէ և իր խաչա իր Երուսաղէմ կը մտնայ: Ինք որ «մէկ գերմանի համար այնքան պահանջկոտ գտնուեցաւ, անշուշտ ասկէց ետքը չկրնար բաժնուիլ եւրոպեան համաձայնութիւնէն, որ, քրիստոնէայ ամբողջ գիւղերու ծուխին, և արեան գետերու առջեւ, սարսափներու վերջ մը գնել կը խնդրէ թուրք կառավարութիւնը իսկոյն ձերբակալելու կարող կըլլայ գերմանացի դիւանականը վիրաւորող աւազակները, չափազանց միամտութիւն է հաւատալ թուրքին այն առարկութեան՝ թէ անկարելի է սանձահարել այն վայրենի ցեղը, որ հայերը լը կոտորէ: և այս բանը յայտնի է նոյն իսկ ամենալիբը փաշաներուն: Ռուսի թուրք կառավարութեան շար կամբը բացարձակապէս յայտնի է:

Ռուս թերթը կը շարունակէ: Եթէ եւրոպական դիւանագիտութիւնը փափայելի աստիճանով նախատես և խնամատար լալար, սօքթ. Պէլրի պատահած արկածէն օգտուելով, նոր գրութիւն մը կը հիմնէր, Թուրքիոյ նահանգները կողպտուէ և աւազակներէ մարքելու համար:

Սուլթանին կալուածները այնքան լայնատարած են, որ անսնց մէջ դիւրին է տեղ գտնել բնակիցներու համար այն վայրերին: Եւ սրովհետեւ Եօրկիոս իշխանը չկար արտօնելու որ անք չըրաժնուին այն շրջաններէն, ուր աւազակութեան զարգացման համար նպաստաւոր պայմաններ չկան: Եւտ հաւանական է որ այդ կեղեքիչները այս գրութեամբ ճամբու գան: Իսկ եթէ անհնարին ըլլայ թող ուրիշ կողմեր գաղթեցնեն զանոնք: Եթէ մեծ պետութիւնները իրապէս միանան այդ կէտին վրայ, շատ դիւրին կըլլայ հարկադրել թուրք կառավարութիւնը լուծում տալ խնդրին, Պէլրիի դաշնագրին հիման վրայ:

«ԻՐԱՒՈՒՆՔ»ԻՆ

Նոյն իսկ Տիար Յ. Պ. ն է որ ինչպէս մեզ, նոյնպէս ալ շատերու հաղորդած է թէ ինք՝ այլեւս բնաւ ձայն չունի խորհրդութեան մէջ, թէ գրուածքներու պատասխանատու չէ և թէ վերապէս միայն պարզ աշխատակցի գեր կը կատարէ: Չեր այսօրուան հա-

մարով ս: ախօս հռչակած էք ուրեմն նոյն իսկ Տիար Յ. Պ. ն:

Եթէ ստոյգ է նաեւ ձեր միւս յայտարարութիւնը՝ թէ նոյն Յ. Պ. ն եղած է ձեր նա՛ որդ համարին «խեղաթիւրման» հեղինակը, ուրեմն պէտք է ընդունիք թէ բոլորովին յուսահատական է ձեր կայսրութիւնը, քանի որ ապացուցած եղաք, թէ նոյն իսկ այդ երկբայելի հեղինակութեան մասնակցութիւնը ձեր խմբագրութեան մէջ, անշուր է ձեզ վրկելու կողմնակալութեան և իմաստակ դատողութեան այն ուղիէն որմէ կընթանաք:

Կը վերագառնանք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ ալցետուն, հասցէտուն, նամակագրուի, հարսանեկան հրաւերագիր, մահադդ, ինչպէս նաև պրօշիւններ:

Գրներն յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՊՕՐՍԱ

Վառնա 4 նոյնիքեր

ՊՈՒՂՏՍՅ	Վազօն, լիպրա	55—58, հէքթօր	9—9.50 ֆրանք
ԱՐԱՍԱ	լիպրա	55—60 հէքթօր	9—12 ֆրանք
ԱՐԲԱ	Լիպրա	42—50 հէքթօր	5.80—6.20 ֆրանք
ՄԻՍԻՐ	Վազօն, Առապա	55—60 լիպրա	6—6.20
	Կիւնկէ	8—10 լիպրա	25—30 առապ
	Կէլմէքէ տիր		
ԵՆԻՒՍՅ	Կիւնալ	20—25 արապա	կէլմէքէ տիր 5.40—5.70 ֆրանք
ԱՐԸ	Կիւնալ	5—6 արապա	կէլմէքէ տիր 5.8—6.0 լիպրա, 4.60—5 ֆրանք
	ՅԱՍՈՒԼԵԱ	Կիւնալ	8—10 առապա
		100 օգգասը	18—22 ֆր. մալա կէօրէ
		Առապա մալալէլէի	Նարօլուն 21 ֆրանք հիսապը իլէ տիր
		Կիւնալ	25—30 լիպրա, 100—120 արապա
		պուրտայ	20—25 արապա
		արքա	կէլմէքէ տիր:

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱՆ ԿԵԱՆՔԻՃ)

(Գ Ի Ն 1 Ֆրանգ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա Տ. Մուշեղ Արմբուրի քով: Մտերս մասուլիս կը յանձնուի նոյն հեղինակին «Բնութեան» գրքերը: